ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. մայիսի 23-ից հունիսի 05-ը
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը. Սամվել Թումանյան

2.Զբաղեցրած պաշտոնը. Արագածոտնի մարզային կենտրոնի գլխավոր տեսուչ

3.Գործուղման վայրը և ժամկետները. Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն ք. Պեկին, ք. Սիան - 2024 թ. մայիսի 23-ից հունիսի 05-ը:

4.Հրավիրող կողմը. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կոմերցիայի նախարարություն, Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ:

5.Գործուղման նպատակը. Վերապատրաստում, մասնագիտական կարողությունների և գիտելիքների բարելավում, «Հայաստանի Հանրապետության համար գյուղատնտեսական և հարակից արտադրանքի և ալկոհոլային խմիչքների խթանում և շրջանառության կառավարում» խորագրով դասընթացի մասնակցություն:

6.Քննարկման թեմաները՝

- Բի Յուան - (ՉԺՀ Շուկայի վերահսկողության և կարգավորման գլխավոր վարչություն) - Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը և վերահսկումը Չինաստանում:
- Խուան Լան - (Պեկինի Ուզի համալսարան) - Գյուղատնտեսական մթերքների և ենթամթերքների բաշխման համակարգը և զարգացման միտումները:
- Տան Վենլուն - (Շանդոնգի Առևտրի և Արդյունաբերության Համալսարան) - Չինաստանում ալկոհոլային խմիչքների շուկայավարման մոդելը և ապրանքանիշի կառավարումը:
- Խու Վենսյաո - (Ցի Լու պոլիտեխնիկական համալսարան) - Չինաստանի գինեգործության ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարները:
- Չժեն Մյաո - (ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ) - Գինեգործական արտադրանքի վերաբերյալ չինական ստանդարտների համակարգը:
- Խուան Յուտոնգ - (ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ) - Չինաստանում նիշային գինիների առաջխաղացման և բաշխման ուղիների ստեղծման փորձ՝ վրացական գինու օրինակով:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Այցելություններ՝

- Ճանաչողական այց ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ.
- Այցելություն Գյուղատնտեսական արտադրանքի էլեկտրոնային վաճառքի բազա Յանգ Լինգ նահանգում.
- Այցելություն Յանգ Լինգ քաղաքի ժամանակակից գյուղատնտեսության ցուցադրական տարածք.
- Այցելություն Guangzhong ՍՊԸ լիկյորի արտադրամաս.
- Այցելություն China Resources Snow Breweries գարեջուր արտադրող կազմակերպության Սիանի մասնաճյուղ.
- Այցելություն Xian Winery Co., Ltd ալկոհոլային խմիչքների արտադրություն.
- Այցելություն Xi'an Aiju Հացահատիկային և ձեթային արտադրանքի արտադրություն:

Այցելությունների ժամանակ քննարկվել է արտադրության կազմակերպմանը, ներարտադրական հսկողությանը, լաբորատոր փորձաքննություններին և պետության 8.կողմից իրականացվող վերահսկողությանը վերաբերող հարցեր:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը ֆինանսավորման աղբյուրը.

Քննարկվել են լաբորատոր փորձաքննությունների ոլորտում հետագա համագործակցությանը առնչվող հարցեր: Քննարկվել են Չինաստանի ազգային ստանդարտների ձեռք բերմանն առնչվող հարցեր: Ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն հետագայում նման ձևաչափով սեմինար դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտի և Հայաստանի Հանրապետության սննդաթմերքի անվտանգության տեսչական մարմնի հետագա համագործակցություն, փորձի շարունակական փոխանակում:

Գործուղվող՝ Սամվել Թումանյան

13.06.2024թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)